

Հր. Թամրազյան

ՏՐՎԱՆՉԱՅԻ ՈՒԺԸ

«Ոչ տը, իհարկե, սկզբում ուշք չղարծրեց նրա վրա: Ներողամիտ ժպիտներ միայն եղան նրան ընդունողները. հետո մի կատարյալ մոռացություն պարփակեց անբախտին: Սակայն, երբ եկան սթափումի օրերը, իրական կյանքը նկարագրող դրչի այդ մարդը նոր միայն սկսեց արժանանալ հատուկ ուշադրության: ...Խմանտիզմն ընկնում էր, քարոզչական-հրապարակախոսական վեպերի նշանակությունը թուլանում. և դրանց փոխարինում էր ռեալիզմը, որ անցյալի մնացորդների վրա էր կանգնեցնում նոր դրոշը, շնորհիվ հրապարակ իջած մի նոր, գեղարվեստական գրողի: Այդ նոր գրողն էր Շիրվանզադեն»¹: Հայ դրականության պատմության այսպիսի թախծալի գույներով է նկարագրում Շիրվանզադեի մուտքն ու ստեղծագործական կյանքի առաջին տարիները:

Շիրվանզադեի մուտքը, իրոք, այնպես շոնգալից չեղավ, ինչպես իր մեծ նախորդի՝ Բաքիու մուտքը: Նրա շուրջը շտեղծվեց նույնօրինակ ջերմ մթնոլորտ, և հիացման աղաղակները երկար ժամանակ չշոյեցին ապագա մեծ արվեստագետի ինքնասիրությունը: Դանդաղ ու հաստատուն եղավ Շիրվանզադեի զարգացման ուղին՝ փառքի մեծ ճանապարհ:

Կյանքի բովից հարուստ տպավորություններով գրական աշխարհ եկած պատանին չէր կարող մրցել Բաքիու հետ, որը ծրագրային-քաղաքական և պատմական վեպերում, հրապարակախոսական հոդվածներում, արժարժելով ազգային-քաղաքական այրող ու ցավալի խնդիրները, դերում ու կախարհում էր իր վշտալի ու դառնացած ընթերցողին: Բայց, այնուամենայնիվ, հենց սկզբից Շիրվանզադեն դրական անբախտ ու միայնակ չեղավ. գրականության պատմաբանը չափազանցում է և չափազանցելով՝ գեղեցկացնում... Շիրվանզադեն համառ ու հաստատակամ՝ դրականության մեջ էր բերում մի ուրիշ կյանք, տառապանքի մի նոր աշխարհ, գեղարվեստական մտածողության ինքնատիպ ու թարմ երանգներ՝ արգասավորելով հայ ռեալիստների տրագիցիան: Եւ չէր կարող չնկատվել, չգրավել ժամանակի դիտող ու խելացի մարդկանց ուշադրությունը: Նրա առաջին քայլերը խրախուսեցին նույն ինքր Բաքիին ու Գր. Արծրունին, Ղ. Աղայանն ու Աբգար Հովհաննիսյանը, Պ. Պոռշյանն ու գրական աշխարհի մյուս ազդեցիկ դեմքերը: Խոսքի կենսական հարստության շնորհիվ Շիրվանզադեի հոդվածներն անգամ, ճիշտ է, անադմուկ, բայց արժանացան ընթերցողի, գրողների և ռուսական մամուլի ուշադրությանը:

90-ական թվականներին և XX դարի սկզբին ամբողջացավ մեծ գրողի ստեղծագործությունը, ուր այս կամ այն չափով արտացոլված էին հայ հասարակական կյանքի գրեթե բոլոր կողմերը: Եթե նկատի ունենանք հայ լիբերալների ու պահպանողականների ռեակցիոն դիրքորոշումը՝ այս շրջանում, ընդդեմ ռեալիստական մեծ գրականության ստեղծած ավանդների, եթե նկատի

¹ Վրբ. Փափազյան, Պատմություն հայոց գրականության, 1910, էջ 519--520:

ունենանք Շիրվանզադեի առաջ քաշած հարցերի ու հասարակական խնդիրների կարևորությունը՝ իր ժամանակի համար և անտես չառնենք ռեալիստական մեթոդի ընդգրկման ուժը և ռեալիզմի ըմբռնումը Շիրվանզադեի կողմից՝ որպես պայքար բուրժուազիայի և նրա ստեղծած ծախու գրականության դեմ, ապա հասկանալի կդառնա այն հետաքրքրությունն ու կատաղի բանավեճը, որ երկար տարիներ մղում էին նրա բոլոր նշանակալի ստեղծագործությունների և ողջ վաստակի շուրջը։ Առանց երկմտելու կարելի է ասել, որ մեծ գրողի վաստակի գնահատության շուրջը բանավեճելիս հակադրվում էին երկու իրարամերձ ուղղություններ՝ հայ պահպանողականությունը՝ սերտ դաշինք կնքած հայ ռեակցիոն լիբերալիզմի հետ՝ ընդդեմ հայ դեմոկրատական գրական մտածողության։ Շիրվանզադեի ստեղծագործությունը ամենատենդենցիոզ կերպով վարկաբեկում էին քառացած մտքի, դարձվոր ավանդապաշտության, խավար մտքի ներկայացուցիչները՝ միացած քաղաքական ու գրական գոհակարարների հետ։ Այս պայմաններում, անշուշտ, հայ գրական պարտելում չէին կարող բուռնել ծաղիկներ ու վարդեր, եթե չլինեին գրողի բարոյական տեժն ու խիզախությունը և ինտելիգենցիայի ազնիվ ու առաջավոր մասի պաշտպանությունն ու հենարանը։

Եվ իրավ, 1904 թ., երբ Շիրվանզադեն «Քաոս»-ի ու «Արտիստ»-ի հեղինակն էր, Լեոն՝ այդ նշանավոր պատմաբանը և վատ քննադատը, «Մշակ»-ի սյունը, այսպես էր գրում. «Իբրև գեղարվեստական գրող պ. Շիրվանզադեն սառն ու անտարբեր էր։ Շատ քիչ են այն տեղերը, որ նա ոգևորություն ու ջերմություն է ցույց տալիս։ Հոգևորական բարդ երևույթների խոշոր տիպեր չէ կարողանում նա մշակել, և նրա գրվածքները մի խոր հետք չեն թողել մեր գրականության մեջ։ Ընթերցողը, փակելով պ. Շիրվանզադեի վեպը, մի շատ կարճ միջոցում մոռանում է նրան։ Բայց և այնպես, նրա վեպերը կարգադրվում են։ Եվ կարգադրվում են այն պատճառով, որ պ. Շիրվանզադեն մտածել, կառուցանել գիտի։ Նա կարողանում է ծրագիր կազմել, վեպի գործողությունը դասավորել, արտաբերել, տեխնիկան մեծ մասամբ հաջողվում է, բայց, ունենալով մի փոքրիկ տաղանդ, չէ կարողանում գեղարվեստական ամբողջական, համաչափ ներդաշնակ երկեր տալ։ Նկարագրությունները շատ աղքատ են, լեզուն չափազանց թույլ, ոչ պատկերավոր։ Մտքի թռիչք, եռանդ, կորով, թափ ու կայծ չկան։ Պ. Շիրվանզադեն կարծես վեպ չի գրում, այլ պաշտոնական արձանագրություններ...»։ Ըիշտ է, Լեոն ժամանակակիցների կողմից լավ ճանաչված էր ծայրահեղ սուբյեկտիվիզմով՝ գրական հարցերում։ Բայց այսօր արդեն ծիծաղելի հնչող այս «կարծիքը» ժամանակի լիբերալ մամուլի գրական քաղաքականության ընդհանուր ոգու արտահայտությունն էր։ Այդպես էին գնահատվում Շիրվանզադեի վեպերն ու գրամաները։ Լեոն նույն ձևով էր մտածում Մուրացանի և Հովհ. Թումանյանի, Նար-Դոսի ու Փափաղյանի մասին։ ԶԺխտելով ռեալիզմը տեսականորեն՝ նա հարգանքով էր խոսում միայն 60—70-ական թվականների գրական երևույթների մասին, «հողմացրիվ» անում իր ժամանակի ռեալիստական երկերը։ Ինչն է պատճառը։ Անշուշտ, գրողի ստեղծագործությունն անցյալում քիչ չի ենթարկվել նաև անձնական-քմահաճ քննադատության, զոհ գնացել ասիական թունոտ թշնամությանը։ Բայց լիբերալներն ու Լեոն դիտելին գրական երկերը գնահատել գաղափարական լիբերալիզմի սկզբունքների տեսանկյունից։ Բուրժուազիան ավարտել էր իր պրոգրեսիվ դերը հասարակական կյանքում։ Սոցիալական ճշմարտացի վեպը, բնականա-

լար, չէր կարող շարտացուել այդ դասակարգի անկումը և արատները: Հայ լուրժնագրի սոցիալական այրող կոնֆլիկտները մեղմացնելու և Ռուսահայաստանից դուրս մղելու նպատակով մի առանձին թափով նվիրվեց թուրքահայ հարցին. գրականության մեջ ևս լիբերալ քննադատությունը, հող ու մոխիր փշելով ընթերցողների աչքերին, գրողներին ձգտում էր մղել ազգայնական-նացիոնալիստական ուղին, սպեկուլյացիայի ենթարկելով ժողովրդի հայրենասիրական զգացումները: Ահա թե ինչու Լեոն և մյուսները մի առանձին ուժով գովերգում էին Ավ. Ահարոնյանի գովածքները:

Ռուսահայոց գրականության պատմաբանը զիրքը վերջացնում է Ահարոնյանի ստեղծագործության սրտառուչ ներլուծով՝ «կյանք, գաղափար և սիրտ» տեսնելով այնտեղ, գրելով. «Մենք շատ ուրախ ենք, որ Ահարոնյանի ժողովրդականությունը վայելող, ընթերցողների մեծ շրջան ունեցող գրականությունն է դառնում մեր վերջաբանը: Մեր ուրախության պատճառը հասկանալի կլինի ընթերցողին, եթե նա աչքի առաջ ունենա այն հայացքները, որ մենք անց ենք կացրել ներկա աշխատության ընթացքում»¹:

Նույն այս հայացքների պատճառով էլ երբեմն պատահում էին ըստ ամենայնի ուշագործված անակնկալներ: Լեոն գովերգում էր Շիրվանզադեին... երբ վերջինս մեղանշում էր առողջ սկզբունքների, ճշմարտացի արվեստի և գեմոկրատիայի առաջ, տուրք տալով հայ լիբերալիզմին: Շիրվանզադեի ստեղծագործությունը քիչ չեն սևացրել նաև պահպանողականները, ամեն տեսակ անսուրբ և հակաազգային բան տեսնելով նրա մեջ:

Բայց այս նույն տարիներին հսկայական չափով մեծացավ Շիրվանզադեի ստեղծագործության նկատմամբ եղած հետաքրքրությունն ու սերը՝ Հայաստանի երկու հատվածում: Նրա երկերը թարգմանվում են ռուսերեն և եվրոպական լեզուներով, նրա դրամաները լեմադրվում բոլոր հայաշատ վայրերում: Հայ ինտելիգենցիայի առաջավոր մասը յուրովի էր քննում նրա ստեղծագործությունը, նրա մեջ տեսնելով ազգային ու համամարդկային լայն ընդգրկումներ, բարձր արվեստ, խոր հոգեբանություն, հումանիստական գաղափարներ: Արևմտահայ գրողները 1911 թ. Շիրվանզադեի հորելյանի օրերին հրատարակեցին, իրենց խոսքով ասած՝ «Սղբայրության ոսկեմատյանը», «Շիրվանզադե և իր գործը» հոգվածների ժողովածուն, որը իրոք, ճշմարիտ հարգանքի և գրողի ստեղծագործության գնահատության մի վայել հուշարձան է: Նրանք ռուսական լայնաշունչ մատենագրության ոգին էին տեսնում Շիրվանզադեի առույգ տաղանդի և հմայքոտ վիպագրության մեջ:

Նույն տարիներին Շիրվանզադեի ստեղծագործությունը մի առանձին սիրով, խելամուռությամբ էին քննում արևելահայ գրողները: Եթե Գր. Զոհրապը գտնում էր, որ ռուսահայ և ռուսական գրականության առողջ ոգին ունեցող Շիրվանզադեի լավագույն երկերը և «Պատվի համար» դրաման բարձր են ժամանակի եվրոպական շատ ու շատ հուշակված գրողների երկերից, ապա գրեթե նմանօրինակ էր մտածում նաև Հովհ. Թումանյանը, մի քանի տարի հետո ճիշտ այդպես էր գրում Վ. Տերյանը:

«Բիեսին կազմվածը, — գրում էր Գր. Զոհրապը, — իր պարզության մեջ հույակապ է և հյուսիսի գրականության հորինվածքը կհիշեցնե: Ռուսահայ թատերագիրը շատ բարձր է Օքտավ Միրոպեն, որ, սակայն, Ֆրանսիայի փառքե-

¹ Լեո, Ռուսահայոց գրականությունը, էջ 413:

րեն մեկն է. իր տարազը Հանրի Պեքի դաժան, բայց անկեղծ նկարագրությունն է, իրական կյանքի դրվագներն վերցված»¹:

Լիբերալ և պահպանողական քննադատության գոհճիկ հարձակումների շրջանում Հովհ. Թումանյանը նույն այդ մեծ արժանիքը, տաղանդի ուժն ու բարձր կուլտուրան է տեսնում Շիրվանզադեի վեպերի ու դրամաների մեջ, Դիմելով հայ ժողովրդին՝ Շիրվանզադեի 30-ամյա հոբելյանի օրերին, նա մի առանձին հպարտությամբ և խորունկ ցավով գրում է. «Վերջապես կը ցանկանայինք, որ մեր ազգն էլ կարողանար տեսնել, գնահատել ու պաշտպանել իր ծնած ուժերը: Եվ երբ որ տեսնի, կը համոզվի, որ նրանց մեջ էլ կան այնպիսիները, որոնք իրենց տաղանդով մրցում են ու հավասար են եվրոպական ժողովուրդների սիրված, հանրահռչակ հեղինակներին, տարբերությունը միայն սրանց ու նրանց բախտի մեջ է»²: Կովելով պահպանողական, տիրացուական, դավառական ճաշակի ըմբռնումների դեմ, հակադրվելով լիբերալ քննադատության գոհճիկարարությանը, ժողովրդի լուսավոր մարդիկ բարձրացնում են ժողովրդի սիրած համբավավոր դրամատուրգի ու վիպասանի ստեղծագործությունը, ճշմարիտ ուղիներ նշում մայրենի գրականության հետագա վերելքի ու առաջխաղացման համար:

Հայ գրականության զարդացման շահերի տեսանկյունից ելնելով, բանաստեղծ Վահան Տերյանը առանձին կրքոտությամբ է խոսում Շիրվանզադեի ստեղծագործության գրական-պատմական նշանակության մասին:

Քարը քարի վրա շիռղնելով Լեռի գրքից ու հայացքներից, անողորմաբար քննադատելով պահպանողականների ծխական մտայնությունը, հակադրվելով Մ. Մատենճյանին՝ հրական անսկզբունքայնությամբ փայլող այդ «ոսկեբերանին», Վ. Տերյանը պաշտպանության տակ է առնում առհասարակ գրականության զարգացման ուսուցիչական ուղին և Շիրվանզադեի վաստակը: Ահարոնյանները չեն կարող նշել մեր գրականության զարդացման մայրուղիները: Նրանք իրենց երկերը զարդարում են եվրոպական զանազան անուններով, բայց դրանք ոչ մի կապ չունեն առաջավոր արվեստի հետ, քանի որ զուրկ են գեղարվեստական ներքին բովանդակությունից, չունեն մտքի խորություն, ազգային ու համամարդկային ընդգրկում: Քննադատելով Ահարոնյանի և այլոց երկերի հենց այդ կողմը՝ Տերյանը գրում է. «Մինչդեռ Շիրվանզադեն, որքան և թերություններ ունենա, դարձյալ կմնա այն հեղինակը, որ տանում է մեր գրականությունը դեպի եվրոպա»³: Տերյանը բարձր է գնահատում այն դրողին, որը տեղական, ազգային տարազի մեջ ստեղծում է համամարդկային բովանդակություն: Տվյալ դեպքում ծաղրելով այն դրողներին, որոնք եվրոպացի լինելու մարմաջով բռնված՝ «խրտվիլակներ են ստեղծում մարդկանց տեղ», նա կրկին բարձրացնում է Շիրվանզադեին, նրա՝ ազգային նյութի վրա ստեղծած երկերում տեսնելով համամարդկայինը, անմահը. «Որքան և տեղական լինի, այնուամենայնիվ Շիրվանզադեի Շապանիկն այդ զարմանալի անունով իսկ ավելի հասկանալի է ամեն մարդու, որովհետև նա կենդանի է, գունաղեղ, ճշմարիտ, գեղեցիկ, իսկ այդ լյուսիններն ու օլզանները՝ անհասկանալի, որովհետև նրանք ամենից առաջ մարդիկ չեն»⁴: Առհասարակ Վ. Տերյանը Շիրվանզադեին բնորոշում է

¹ «Շիրվանզադե և իր գործը», «Պատվի համար», էջ 289:

² «Թումանյան քննադատ», էջ 177:

³ Վահան Տերյան. Երկեր, 1950, էջ 510:

⁴ Նույն տեղում, էջ 513:

որպես ուղի հարթող հեղինակ՝ դրամայի և վեպի ասպարեզում, անզուգական համարելով նրա ծառայությունները հայ գրականության գալիք օրվա համար:

Այսպիսով, դեռևս նախառևտյուցիոն շրջանում լիբերալ և պահպանողական քննադատությունը ծանր հարված է ստանում հայ դեմոկրատական ինտելիգենցիայի կողմից, և դրվում են շիրվանզադեագիտության առողջ ու ամուր հիմքերը: Այդ ասպարեզում չի կարելի մոռանալ Արս. Տերտերյանի «Շիրվան-դադե—հայ ընտանիքի և ինտելիգենտի վիպասանը» աշխատությունը: Երբում կան մի շարք անընդունելի հարցադրումներ և խիստ ակնհայտ թերություններ, որոնք հետագայում մշակվում էին նշանավոր գրականագետի ավելի հասուն տարիների երկերում: Այսպես, օրինակ, Տերտերյանը գրեթե անտեսում էր պատմականության սկզբունքը՝ գրական երկերի քննության ժամանակ, ընդհանրություններ որոնելով Շիրվանզադեի տիպերի ու բնավորությունների միջև, շտեմելու է տալիս նրանց տարբերությունները, զուգահեռականի սխեման անցկացնելով իր գրքում: Վերջապես, երիտասարդ քննադատը տուրք է տվել պսիխոլոգիական-հոգեբանական դպրոցի հակագիտական տեսությանը: Բայց այս բոլորով հանդերձ, կրքով, տաղանդով և գեղեցիկ նուրբ զգացողությամբ, Տերտերյանը ասպարեզ է հանում լիբերալ քննադատության հակազդագիտական սկզբունքները, երկերի վերլուծման գոհհիլ մեթոդը, շատ հաճախ երևան հանելով Շիրվանզադեի տիպերի հոգեկան ներքին գեղեցկությունները¹:

Շիրվանզադեի ստեղծագործության գրական-պատմական արժեքի գնահատությունը ոլորապատույտ ճամփաներով հասավ սովետական գրականագիտության ձեռքը: Բայց ցավով պետք է ընդգծել, որ սովետական շրջանում էլ այսպես թե այնպես շարունակվեցին վեճերն ու հակասությունները: Հիշատակելով մեր մամուլի և հրատարակությունների ծառայությունները՝ մեծ գրողի ստեղծագործության արժեքավորման ուղղությամբ, նշելով գրողի շուրջ ստեղծված խոր համակրանքի և սիրո մթնոլորտը՝ սովետական միլիոնավոր ընթերցողների կողմից չենք կարող, այնուամենայնիվ, չխոսել մինչև վերջերս հայտնաբերված մի ցավալի տենդենցի մասին, որը ծանր հարված է հասցրել և շիրվանզադեագիտությանը, և առհասարակ սովետահայ գրականագիտությանը:

Մեծ գրողի ստեղծագործությունը երկար տարիներ բզկտվում էր գոհհիլ սոցիոլոգիզմի ճիրաններում, որի պատճառով էլ սովերի տակ էին մնում գրողի հումանիզմը, ստեղծած հասարակական հոգեբանությունը, քննադատության առաջադիմական ու ազնիվ կողմերը:

Ստեղծված էր երկու տրագիցիա, հարկավոր էր ընտրություն անել: Այս ընտրության հարցում էլ ահա մի շարք գրականագետներ ընկան անուղղելի սխալանքի մեջ, ճակատագրի ինչպիսի՝ հեգնանք,—Շիրվանզադեի երկերը, որոնք տասնամյակներ շարունակ հալածվում էին լիբերալների կողմից,— մոտ 100 տասնամյակ էլ սովետական շրջանում՝ հայտարարվեցին լիբերալ գաղափարախոսության արտահայտություններ, իսկ ինքը Շիրվանզադեն, ոչ ավել:

¹ Սովետական շրջանում տպագրած իր մի քանի հոդվածներում Տերտերյանն արժեքավոր գիտողություններ է անում և հետաքրքրական եզրակացությունների հանդում՝ Շիրվանզադեի ստեղծագործությունը դնահատելիս («Շիրվանզադեի լեզուն և ոճը», «Ներկանգահեի տիպերի էպոխան»): Առանձնապես ուշագրավ է «Ընտանիքի և ինտելիգենտի վիպասանը» իր իսկ կողմից առաջադրած թեզի քննադատությունը, որը լուրջ ներդրում է շիրվանզադեագիտության մեջ: Դժբախտաբար, մինչև այսօր չի հրատարակվել և մեզ անծանոթ է անվանի գրականագետի «Շիրվանզադեի տիպերի էնցիկլոպեդիան» ծավալուն աշխատությունը, որը, անշուշտ, չի կարող չունենալ գիտական լուրջ հետաքրքրություն:

ոչ պակաս՝ լիբերալ բուրժուազիայի գաղափարախոս։ Այսօրինակ քննադատության դրոշակակիր մեզանում եղավ հանգուցյալ Դուրզեն Վանանդեցին («Շիրվանզադեի ստեղծագործությունը»)։ Ընչպես սրամիտ չափազանցություն՝ իր ժամանակակիցներն են ընտրողել, այդ աշխատության երեք քառորդը նվիրված էր հայ կապիտալիզմի զարգացման պատմությանը և երկաթուղիների շինարարությանը... մի քառորդը՝ Շիրվանզադեի երկերին...

Վանանդեցին, զանազան դատողություններ անելով լիբերալիզմի գործունեության մասին՝ էկոնոմիկայի, քաղաքականության և արվեստի ասպարեզում, աչքաթող անելով սրա էվոլյուցիան 90-ական թվականներին ու XX դարի սկզբին, փորձում է ռեալիզմի զարգացման էտապը և Շիրվանզադեի ստեղծագործությունը անվերապահորեն կապել լիբերալ մտածողության հետ։ «Բուրժուական ռեալիզմը կաղապարվում էր բուրժուական աշխարհայեցողության վրա»։ «Այն ինտելիգենցիան, որ պարզեց գրական ռեալիզմի դրոշակը—իդեալիստական մտածելակերպի տեր էր... Բուրժուական ռեալիզմի մեջ չկա բողոք բուրժուական հասարակության մեջ տիրող հարաբերությունների դեմ»¹։ Վանանդեցին այդ ռեալիզմի մեջ տեսնում էր սոսկ բուրժուազիայի բարոյական կերպարի խարազանումն ու մերկացումը։ Այսպիսով, գրականագետը, քննադատական ռեալիզմը անվերապահ կապելով հայ խոշոր բուրժուազիայի իդեոլոգիայի՝ լիբերալիզմի հետ, առհասարակ նրանից դուրս է մղում էականը՝ հասարակական-սոցիալական մեծ բովանդակությունը, բուրժուական հարաբերությունների և ցարական կարգերի քննադատության առաջադիմական ու ղեմավարական տենդենցները, կենտրոնում թողնելով միայն բուրժուական անհատի քննադատության սնամեջ թեորիան։ Բայց այսօրինակ մոտեցմամբ նա չէր կարող լուծել հարցը։ Այսպես թե այնպես նա ականարկում է նաև Շիրվանզադեի ստեղծագործության ընդգրկման լայն շրջանակները, քննադատության ուժեղ կողմերը, նա մոտենում է մեթոդի ու աշխարհայացքի ըստ էության հակադիտական թեորիային, որը ժամանակին անց էր կացվում մարքսիզմի բողի տակ։ «Շիրվանզադեի ռեալիզմը իր մերկացնող կողմերով և հակառակ իր ազատամտական տենդենցների, տվյալ շրջանում դարձավ զենք ոչ այնքան բուրժուազիայի օգտին, որքան ընդդեմ բուրժուազիայի»²։ Այսպիսով, ողջ աշխատության մեջ այն գիծն է անցկացվում, թե Շիրվանզադեն քննադատել է սևփական դասակարգին՝ խոշոր բուրժուազիային՝ նրա շահերի տեսանկյունից, նրան դարձի բերելու նպատակով։ Այս թեորիայի պատճառով էլ ոչ Վանանդեցին, ոչ էլ նրա հետևորդները չկարողացան վեր հանել Շիրվանզադեի ստեղծագործության գեղարվեստական արժանիքները, պաթոսը, հոգեբանական ուժն ու հասարակական արժեքը, քանի որ հայացքներն ու գեղարվեստական պատկերը հակադրվում էին իրար, ժխտվում էր աշխարհայացքի դերը գեղարվեստական արժեքի, տիպի և տիպականի ստեղծման ասպարեզում, գրողի ստեղծագործությունը մնում էր յոթ փականքի տակ։ Ըստ այդ տեսության, եթե գրողը չի հասկացել պրոլետարական ռեվոլյուցիայի խնդիրները, չի կանգնել նրա պայքարի դիրքերի վրա, ապա պետք է կանգնած լինի խոշոր բուրժուազիայի դիրքերի վրա։ Սա մի թեզ է, որի կիրառման դեպքում խորթ ու հակաժողովրդական դուրս կգան գրեթե բոլոր նշանավոր գրողները, քանի որ անցյալում միայն մի քանի գրողներ են հասկացել պրոլետարիատի քաղաքական պայքար-

¹ «Նոր ուղի», № 1, 1939, էջ 244—245։

² Նույն տեղում, էջ 248։

րի մերձավոր ու հեռավոր նպատակները: Լենինը իր դիալեկտիկ հանճարեղ մտածողությամբ բոլորովին այլ կերպ է մոտենում անցյալի դրական ժառանգության գնահատությանը: «Եվ Տոլստոյի հայացքների հակասությունները պետք է գնահատել ոչ թե արդի բանվորական շարժման և արդի սոցիալիզմի տեսակետից (այդպիսի գնահատական, իհարկե, անհրաժեշտ է, բայց բավական չէ), այլ վերահաս կապիտալիզմի, մասսաների քայքայման ու հողադրվման դեմ ուղղված այն բողոքի տեսակետից, որին պետք է ծնունդ տար ռուսական նահապետական գյուղը»: Լենինյան այս նշանավոր դրույթը հնարավորություն է ընձեռում բացահայտել մեր գրականության դեմոկրատական տենդենցները, ժողովրդական բողոքի և ատելության մոտիվները, որոնք կուտակվել են տասնամյակների ընթացքում և չէին կարող այս կամ այն շահով չնպաստել պրոլետարիատի և գիտակցության եկող դեմոկրատական շերտերի սոցիալական-քաղաքական պայքարին:

Կոնկրետ դեպքում խոսքը վերաբերում է հայ գրողներին և Շիրվանզադեին, որոնց ստեղծագործության լավագույն մասը ստեղծվել է ռուսական առաջին՝ բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի նախօրյակին: Եթե Շիրվանզադեն հեռու էր կանգնած գիտակից պրոլետարիատի պայքարից, ապա միթե, այնուամենայնիվ, նրա հայացքների և ստեղծագործության մեջ չեն արտացոլվել հայ դեմոկրատիայի տրամադրությունները, քաղաքային մանր բուրժուազիայի և նույնիսկ գյուղացիության, այսինքն՝ աշխատավորական-դեմոկրատական լայն շրջանների սոցիալական բողոքի ու ատելության մոտիվները: Շիրվանզադեն, հենվելով գերազանցապես գյուղից քաղաք եկած նոր կազմավորվող, դեռ ևրեկվա գյուղացիության, քաղաքային քայքայվող արհեստավորության և ինտելիգենցիայի այն մասի վրա, որն իրեն հեռու էր պահում ազգային պահպանողական հոսանքից, լիբերալների և դաշնակցականների ազգային ավանտյուրայից, արտահայտել է դեմոկրատական վառ տենդենցներ ընդդեմ ցարական ինքնակալության և հայ խոշոր բուրժուազիայի, ընդդեմ ազգային ճնշման և նացիոնալիզմի: Նա դատապարտել է կալվածատիրական-ազնվականական Ռուսաստանը, հենվելով նաև տեղական հարուստ փաստերի վրա, համակրել է բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան, միաժամանակ, չմշակել լիբերալ աշխարհայեցողության սահմաններում, անողոր քննադատության է ենթարկել հատկապես խոշոր բուրժուազիային: Դրողը, տարբերվելով գյուղացիական դեմոկրատներից, չի ժխտել կապիտալիստական հասարակության առաջարկյալ՝ ֆեոդալականի հետ համեմատած, բայց և միաժամանակ ցույց է տվել բուրժուական հասարակարգի քաոսը, մասսաների անողորմ ու անմարդկային կողոպուտը, կապիտալիզմի թալանի ու բռնության, արյան քաղաքականությունը:

Կարելի է վստահորեն ասել, որ նա նախառևոլյուցիոն շրջանի համառուսաստանյան գրողների շարքում այն հազվագյուտ գրողներից մեկն էր, որոնք ամբողջ մերկությամբ ցուցադրել են կապիտալիզմի բերած սոսկալի շարիքները, նրա արագ անկումն ու դառամախտը, մասսաների անմարդկային թալանն ու կողոպուտը: Եվ եթե Շիրվանզադեն լրիվ չի կարողացել ասել այն ճշմարտությունը, որ կապված էր պալիքի հետ, կիսատ է թողել իր խոսքը կամ թե այն վերջացրել է ռոմանտիկ ժպիտներով, ապա դա բնավ չի նսեմացնում նրա առաջադրած սոցիալական մեծ կոնֆիկտների, հասարակական խնդիրների կարևորությունը, գեղարվեստական ընդհանրացումների արժեքը: Նրա ան-

հետևողականությունը՝ հարցերի լուծման մեջ, խորապես կապված է հայկական կյանքի որոշ սահմանափակությունների և դեմոկրատական ինտելիգենցիայի հայտնի տատանումների հետ:

Նրա սիրած աշխատավորական խավերը և հենց ինտելիգենցիան, անկեղծ ատելություն ունենալով խոշոր բուրժուազիայի, միապետության, տիրող քաղաքական կարգերի ու բռնության նկատմամբ, այնուամենայնիվ հաճախ էին տարվում մերթ լիբերալ պատրանքներով, մերթ տոլստոյականությամբ, քաղաքական պայքարի ճգնաժամային պահերին երերվում էին, որպես եղեգնը՝ հողմից:

Եթե Շիրվանզադեի ստեղծագործությունը քննենք նրա հայացքների հակասության լույսի տակ, տեսնենք նրա լույսն ու ստվերը, ապա հեշտությամբ կարող ենք ցուցադրել նաև նրա երկերի հասարակական-քաղաքական բովանդակությունը, գեղարվեստական ուժն ու հարստությունը: Ահա թե ինչու հարկ ենք համարում հիշել երեկվա մեր հայացքները: Հիշում ենք, քանի որ նրանց խոսքը շի մնացել անցյալի սահմաններում ու շրջանակներում: Անհնար է առտարբեր անցնել դրանց մոտով, քանի որ սոցիոլոգիզմը երկար տարիներ իշխել է մեր գրական քննադատության մեջ և այսօր էլ երբեմն-երբեմն ավել կամ պակաս շափով զգացնել է տալիս իրեն: Այսպես, օրինակ, հանգուցյալ Հ. Մելիքյանը Շիրվանզադեի մահվան 15-ամյակի առթիվ դրել է. «Զհասկանալով ուղղության փրկարար նշանակությունն ամբողջ մարդկության համար և բացասելով դասակարգային պայքարը՝ Շիրվանզադեն, ինչպես մոլորված քարոզիչ, պաշտպանում է գիշատիչ բուրժուազիային դաստիարակելու, բարեկրթելու և ազնվացնելու լիբերալ, բազմիցս ծեծված ուտոպիան»¹: Մելիքյանի հողվածում Շիրվանզադեն դառնում է գիշատիչ բուրժուազիայի մի խղճով պաշտպան և բարոյախոս, նրա շահերի պաշտպանը, եռանդուն կարեկիցն ու գործվագութ քննադատը:

Համառոտ գծերով այս է հայ քննադատության մեջ դրսևորված երկու տրագիդիան, որոնք երկար ժամանակ պահպանել են իրենց ուժը մեր գրական մտքի ասպարեզում: Անհրաժեշտ է հիմք ընդունել հայ դեմոկրատական քննադատության ստեղծած արգասավոր տրագիդիան, որը հնարավոր է դարձնում ավելի լայն ու բազմակողմանի դիտել գրական այդ հսկայի վիթխարի հասակը: Այդ տրագիդիան կենսունակ է, նա մի կողմ է նետում մտացածին սխեմաները և հարադատ դառնում ընթերցասեր լայն հասարակության համար: Օգտագործելով մեր նախորդների ստեղծած լավագույնը, պետք է ձգտել բացահայտել Շիրվանզադեի ստեղծագործության գեղարվեստական ու հասարակական արժեքը, ցույց տալ նրա անցած ճանապարհի իրական պատկերը, ստեղծագործական վերելքներն ու վայրէջքները: Միայն մարքս-լենինյան ուսմունքը գրականության մասին հնարավորություն է ընձեռում աղատագրել Շիրվանզադեին սոցիոլոգիզմի ճիրաններից, դիտականորեն գնահատել նրա ստեղծագործությունը, որը, հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի երկերի հետ միասին, բերում է հայ և անդրկովկասյան հասարակական կյանքի մի ամբողջ էպոխայի ռեալիստական պատկերը և նշանավորում հայ գեղարվեստական մտքի վիթխարի առաջաքայլը:

¹ «Սովետական գրականություն», № 7, 1950, էջ 78: